Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 6

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 14-ը՝ Նորիկ Անդրեասյանը, Տիգրան Գալստյանը, Ազատ Զաքարյանը, Արտաշես Խաչատրյանը, Աշոտ Հունանյանը, Վահագն Մկրտչյանը, Կարեն Շահազիզյանը, Սամվել Շուխյանը, Նավասարդ Պետրոսյանը, Արմենակ Սարգսյանը, Բաբկեն Վարդանյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը, Սարիբեկ Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Սաֆարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա. Խաչատրյանը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մնացականյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Ս. Սահակյանը, ՀԿ նախագահ Ն. Բոցինյանը, լրագրողներ:

Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

1. Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

2. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

3. <Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին> համայնքի ավագանու 14.11.2016թ. N 6-Ա և 19.01.2017թ. N 4-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Զ. Գևորգյան/

4. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության երկու հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

5. Աշտարակ համայնքի ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման հայեցակարգի հաստատման մասին:

   /Զեկուցող՝ Զ. Գևորգյան/

Լ Ս Ե Յ Ի Ն - 1 - *Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անժելա Խաչատրյանը:

Զեկուցման վերաբերյալ նյութերն աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Զեկուցողին հարցեր տվեցին և պարզաբանումներ ստացան Սարիբեկ Օվոյանն ու Կարեն Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Ա. Խաչատրյանը, Զ. Գևորգյանը և համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Ավագանու անդամ Ս. Օվոյանն առաջարկեց ներկայացված հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Քվեարկության արդյունքում այն ընդունվեց միաձայն:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին

Օրակարգային երկրորդ հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա. Խաչատրյանը:

Զեկուցողը նշեց, որ համայնքապետարան են դիմել առանձին քաղաքացիներ, իրենց գույքահարկի և հողի հարկի գծով որոշակի արտոնություններ տալու խնդրանքով: Նա միաժամանակ նշեց, որ նրանց կողմից կատարվել են նաև վճարումներ: Արտոնություններ ստացածների ցուցակը կցվում է սույն արձանագրությանը:

Քվեարկությունից առաջ ելույթ ունեցան և զեկուցողին հարցեր տվեցին Ն. Անդրեասյանը, Մ. Տաշչյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը և Կ. Շահազիզյանը:

Հարցերին պատասխանեցին Ա. Խաչատրյանն ու Թ. Շահվերդյանը:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 3</u> - <Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին> համայնքի ավագանու 14.11.2016թ. N 6-Ա և 19.01.2017թ. N 4-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը:

Զեկուցողը նշեց, որ առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են համայնքի ավագանու հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված, <Կոմիտաս>-ի անվան զբոսայգում պլանավորված աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աղբահանության և սանիտարական մաքրման ծավալների մեծացման հետ:

Միաժամանակ առաջարկվեց համաձայնություն տալ ընդունվելիք որոշումն ուժի մեջ համարել 2017 թվականի ապրիլի 1-ից:

Հարցի կապակցությամբ զեկուցողին և համայնքի ղեկավարին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը, Մ. Տաշչյանը և Ն. Անդրեասյանը:

Ստանալով սպառիչ հիմնավոր պատասխաններ, ելույթ ունեցողներն առաջարկեցին ներկայացված փոփոխություններն ընդունել:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 4</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության երկու հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Հարցը ներկայացրեց և զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Մնացականյանը:

Զեկուցողը նշեց, որ ՀՀ Կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 529-015 ծածկագրից 0.095հա և 529-011 ծածկագրից 0.0613հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը /վարելահող/ փոխանցվել են որպես ֆիզիկական անձի սեփականություն: Իրականում նշված հողակտորները հանդիսանում են համայնքային սեփականություն, ուստի և առաջարկվում է ընդունել համապատասխան որոշում նշված փաստը հաստատելու և այն աճուրդային եղանակով օտարելու համար: Մեկ քմ-ի մեկնարկային գին է առաջարկվում սահմանել կադաստրային արժեքի 100%-ը:

Առանձին հարցեր ճշտելու համար զեկուցողին հարցեր տվեցին և պարզաբանումներ ստացան Արմենակ Սարգսյանը, Նորիկ Անդրեասյանը և Արտաշես Խաչատրյանը:

Որոշակի պարզաբանումներ տվեց հարցին տեղյակ Վ. Մկրտչյանը:

Խնդրի հետ կապված լրացուցիչ բացատրություններ տվեց Թ. Շահվերդյանը:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Աշտարակ համայնքի ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման հայեցակարգի հաստատման մասին

Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը /տեքստը կցվում է սույն արձանագրությանը/:

Հայեցակարգի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնեցին և զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը /հայեցակարգի մշակման հեղինակների մասին՝ ովքեր են մասնակցել և ինչ կազմակերպություններ/, Կ. Շահազիզյանը /քաղաքի պատմական միջուկի օգտագործման մասին, հին բաղնիքի շենքի օգտագործման տարբերակների մասին/, Ա. Սարգսյանը /ֆինանսական ինչ միջոցների հաշվին են իրականացվելու մի շարք աշխատանքներ/, Ն. Բոցինյանը /հանձնաժողովում ովքեր են ընդգրկվելու/, Ա. Հունանյանը, Մ. Տաշչյանը:

Բարձրացված հարցերին հանգամանալից պատասխաններ տվեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում ընդունվեց միաձայն որոշում:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2017 թվականի ապրիլի 14-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ